

1

Երէջը՝ սիրելի Գայիոսին, որ կը սիրեմ ճշմարտութեամբ: 2 Սիրելի՛ս, կ'ըղծամ որ ամէն կերպով յաջողիս եւ առողջ ըլլաս, ինչպէս քու անձդ ալ յաջողութեան մէջ է: 3 Որովհետեւ մեծապէս ուրախացայ, երբ քանի մը եղբայրներ եկան ու վկայեցին քու ճշմարտութեանդ մասին, թէ կ'ընթանաս ճշմարտութեամբ: 4 Ամենամեծ ուրախութիւնս է լսել՝ թէ իմ զաւակներս կ'ընթանան ճշմարտութեամբ:

ԳԱՅԻՈՍ ԿԸ ԳՈՎՈՒԻ

5 Սիրելի՛ս, դուն հաւատա՛րմաբար կ'ընես՝ ինչ որ կ'ընես եղբայրներուն եւ օտարականներուն. 6 անոնք վկայեցին քու սիրոյդ մասին եկեղեցիին առջեւ: Եթէ ուղարկես զանոնք աստուածահաճոյ կերպով՝ լա՛ւ կ'ընես. 7 որովհետեւ անոնք մեկնեցան Աստուծոյ անունին համար՝ ոչինչ առնելով հեթանոսներէն: 8 Ուրեմն մենք պարտաւոր ենք ընդունիլ այդպիսիները, որպէսզի գործակից ըլլանք ճշմարտութեան:

ԴԻՈՏՐԵՓԷՍ ԵՒ ԴԵՄԵՏՐԻՈՍ

9 Գրեցի եկեղեցիին. բայց Դիոտրեփէս, որ կ'ուզէ անոնց մէջ առաջին ըլլալ, չ'ընդունիր մեզ: 10 Ուստի եթէ գամ՝ պիտի մտաբերեմ անոր ըրած գործերը, քանի որ կը շաղակրատէ մեզի դէմ չար խօսքերով: Չի բաւարարուիր ասով, եւ ո՛չ միայն չ'ընդունիր եղբայրները, հապա կ'արգիլէ ու եկեղեցիէն կը վտարէ անոնք՝ որ կ'ուզեն ընդունիլ: 11 Սիրելի՛ս, մի՛ նմանիր չարին, հապա՝ բարիին: Ա՛ն որ բարիք կ'ընէ՝ Աստուծմէ է. բայց ա՛ն որ չարիք կ'ընէ՝ տեսած չէ Աստուած: 12 Իսկ Դեմետրիոս բարի վկայուած է բոլորէն, նոյնիքն ճշմարտութենէն ալ: Մե՛նք ալ կը վկայենք, եւ դուք գիտէք թէ մեր վկայութիւնը ճշմարիտ է:

ՎԵՐՋԻՆ ԲԱՐԵԻՆԵՐ

13 Գրելիք շատ բան ունէի, բայց չեմ ուզեր մելանով ու գրիչով գրել քեզի: 14 Սակայն կը յուսամ թէ շուտով պիտի տեսնեմ քեզ, եւ պիտի խօսինք դէմ առ դէմ: 15 Խաղաղութի՛ւն քեզի: Բարեկամները կը բարեւեն քեզ. բարեւէ՛ մեր բարեկամները՝ իւրաքանչիւրը իր անունով: